

կը զետեղեն 1629 Յունուար 13—1632 Մայիս 14 տարիներու մէջ: Հ. Ղ. Ալիշան անդամ մը <sup>15</sup> կը նշանակէ «13 Յանու(ար) 1630—14 Մայիս 1633» եւ ուրիշ անդամ <sup>16</sup> 1629—1632:

Մովսէսի մահուան թուականին հետ սերտ կապուած են յաջորդին՝ Փիլիպպոս կաթողիկոսի ընտրութեան եւ օծման թուականները:

Արդ կը պատմէ Դաւրիժեցի թէ «ի ՌՁՍ. թուին», երբ մահուան անկողնոյն մէջ էր Մովսէս, «ժողովեցան առ նա եպիսկոպոսք եւ վարդապետք եւ երեւելի արք, նաեւ Քահնապետք ի իսան» եւ հարցուցին թէ ի՞նչ է իր կամքը յաջորդի ընտրութեան մասին. «մեք, բոլոր աշխարհ զքեզ ընտրեցաք. եւ այժմ դու զով ոք եւ ընտրես՝ ընդունելի է մեզ»: Ասոր վրայ կը յայտնէ կաթողիկոսն, թէ «Ես զՓիլիպպոս վարդապետն կամիմ լինել փոխանորդ իմ եւ յաջորդ Ս. Աթոռոյն էջմիածնի»: Երբ կը տարածուի կաթողիկոսի մահուան գուժը եւ թէ անոր վերջին կամքն եղած է որ Փիլիպպոս ըլլայ յաջորդը, «յիւրաքանչիւր տեղեաց առաքեցին թուղթս վկայութեան, զի Փիլիպպոս վարդապետն լիցի կաթողիկոս»: Կ'աւելցնէ պատմագիրը, թէ «մինչ ի դալ թղթոցն էանց այն ամն. եւ եհաս ի վերայ թուականն ՌՁԲ, յորում ամի օրհնեցին զնա կաթողիկոս օծմամբ Հոգւոյն սրբոյ, յամսեանն Յունվարի ԺԳ. ի տօնի

<sup>15</sup> Սիսական, էջ 277 եւ Այրարատ, 231:

<sup>16</sup> Այրարատ, էջ 216: